

պարգեւեց ապահովութիւն նոցա կենաց, ընչից եւ կրօնին, որոնք վնասի կամ նախատանքի չպէտք է ենթարկուին: Հայոց եւ Գարբանդի՝ թէ բնիկ եւ թէ եկտր ժողովրդի, նաեւ շրջակայ ազգաբնակութեան հետ նա պայմանաւորեցաւ, որ նոքա օգնեն (մուսլիմներին) բոլոր պատերազմներում եւ հնազանդին միանգամայն նաբի՝ բոլոր հրամաններին, իսկ եթէ նաբ չլինի՝ վալիի վճիռներին: Սորա փոխարէն ազատ կը լինի գլխահարկից նա, ով ընդունեց այս պայմաններն², բաց ի զինւորական ծառայութիւնից, որ կը փոխանակէ գլխահարկը: Ով գոհ լինի սորանով եւ մնայ երկրում, նորա վերայ կը ծանրանայ նոյն գլխահարկը, որ եւ Ատրպատականի ժողովրդի վերայ: Նոքա պարտաւոր են ուղեցոյց ծառայել (մուսլիմին) եւ նորան հիւրընկալել մի ամբողջ օր. եթէ զինւորական ծառայութիւն անեն, ազատ կը լինին այս պարտականութիւնից, իսկ եթէ թողնեն (ծառայութիւնն), իրանց վերայ կ'առնեն այս ծանրութիւնն: Վկայ են Աբդուլուահման Ի. Ռաբիայ, Սալման Ի. Ռաբիայ եւ Բուկէյր Ի. Աբդուլահ. գրեց Մարդի Ի. Մուքարրին³:

Ապա Սուրաբայ ուղարկեց Բուկէյրին՝ Մուղան (موغان), Հաբիբ Ի. Մասլամային՝ Տփղիս, Հուզայֆայ Ի. Ասիդին՝ Ալանաց լեռները եւ Սալման Ի. Ռաբիային՝ մի այլ կողմ. սոցանից եւ ոչ մէկը չնւաճեց իրեն նշանակած երկիրը, բացի Բուկէյրից, որ ցրեց³ Մուղանի բնակիչներին, որոնք վերադարձան իրենց բնակատեղերը՝

¹ Նահապետ, որ գատաւորի իշխանութեամբ հանդերձեալ էր. գատաւոր:

² Ես կը կարգամ ذلك من اجاب الى ذلك
توضع الجزاء عن اجاب الى ذلك

³ Ըստ այլ ձեռագրի «եկաւ Մուղան»: